Կ-954-29.10.2024-ՊԻ-011

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 5-րդ մասը «արտաքին հետախուզության ծառայության,» բառերից հետո լրացնել «դիվանագիտական ծառայության» բառերով:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասից «ամենացածր դասային» և «բարձր դասային» բառերից հետո հանել «կամ դիվանագիտական» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.3-րդ մաս.

«3.3. Դիվանագիտական աստիճանի համար հավելավճարը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի 80 տոկոսի չափով:».

3) 7-րդ մասում «բացառությամբ» բառից հետո լրացնել «դիվանագետներին,» բառերով:

Հոդված 3. Ուժը կորցրած ճանաչել 17-րդ հոդվածի 3-րդ մասը:

Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել Հավելված 9-ի «Դիվանագիտական ծառայություն» աղյուսակի 8-րդ սյունակը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 5-րդ մասը «արտաքին հետախուզության ծառայության,» բառերից հետո լրացնել «դիվանագիտական ծառայության» բառերով:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում՝

3) 3-րդ մասից «ամենացածր դասային» և «բարձր դասային» բառերից հետո հանել «կամ դիվանագիտական» բառերը.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.3-րդ մաս.

«3.3. Դիվանագիտական աստիճանի համար հավելավճարը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի 80 տոկոսի չափով:».

3) 7-րդ մասում «բացառությամբ» բառից հետո լրացնել «դիվանագետներին,» բառերով:

Հոդված 3. Ուժը կորցրած ճանաչել 17-րդ հոդվածի 3-րդ մասը:

Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել ~~N 9 հ~~Հավելված 9-ի «Դիվանագիտական ծառայություն» աղյուսակի 8-րդ սյունակը:~~ի «Գլխավոր քարտուղար» պարբերությունը:~~

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-954-29.10.2024-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված տեխնիկական բնույթի պահանջներին	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված տեխնիկական բնույթի պահանջներին	Ընդունվել է	Ընդունվել է